ԲԱՆԱՎԵՃ ДИСКУССИЯ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Բնական է այն մեծ հետաքրքրությունը, որ հայագիտությունը հանդես է բերել և շարունակում է հանդես բերել հայ ազատագրական շարժումների նկատմամբ՝ լինի դա հեռավոր անցյալի, թե նոր ու նորագույն շրջանի։ Եվ դա միանգամայն հասկանալի է, երբ նկատի ենք ունենում, որ ազատագրական մաքառումը (իր տարբեր դրսևորումներով) եղել է մեր ժողովրդի պատմության մշտական ուղեկիցը՝ սկսած հնագույն ժամանակներից ընդհուպ մինչև մեր օրերը։

Անվիճելի իրողություն է, և դա հաստատել են պատմությունն ու ժամանակը, որ հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական պայքարի ամենափայլուն դրվագներից մեկը սասանյան Պարսկաստանի տիրապետության ու բռնի ներձուլման քաղաքականության դեմ ուղղված 451 թ. հուժկու ապստամբությունն է, որ ի պատիվ նրա քաջարի առաջնորդի և յուր հավատարիմ զինակիցների Վարդանանց պատերազմ անունն է կրում։ Վարդանանց ապստամբությունն, իրոք, վիթխարի ազդեցություն է ունեցել հետագա դարերի ողջ հայոց պատմության վրա՝ ժողովրդի պատմական հիշողության մեջ ակոսվելով որպես ազատագրական մեծ ոգորումների, ազգային պատվի ու արժանապատվության պաշտպանության, ժողովրդի իսկ գոյության, նրա ինքնության պահպանման համար մղվող պայքարի մի անկրկնելի խորհրդանշան՝ դարեր շարունակ ոգեշնչելով հայ քաջորդիների բազում սերունդներ, նրանց մղելով հայրենասիրական-ազատագրական նոր սխրանքների։ Եվ սա անընդմեջ, մեր ժողովրդի պատմության բոլոր դարերում։ Հասկանալի է, ուրեմն, թե ինչու հայոց պատմության այդ նշանավոր իրադարձությունը V դարից, Ղազարի ոսկեդենիկ մատյանից սկսած այնպիսի տևական ու լայն արձագանք է գտել ազգային պատմագրության, գեղարվեստական գրականության մեջ, արվեստի ու ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններում։ Վարդանանց պատերազմի թեմաներով կերտվել են գրական ամենատարբեր ժանրերի (բանաստեղծություն, պոեմ, դրամա, վեպ, վկայաբանություն, շարական և այլն) անհամար քերթվածներ, գեղանկարչական ու քանդակագործական արվեստի բազմաթիվ սքանչելի ստեղծագործություններ, ժողովրդական գեղեցիկ ավանդություններ։

Մեծ ու արդյունաշատ աշխատանք է կատարված հայ ժողովրդի պատմության այդ նշանավոր դրվագի պատմաքննական հետազոտման մարզում, որի շնորհիվ Վարդանանց պատերազմի հետ կապված բազմաթիվ կարևոր հարցեր ստացել են իրենց վերջնական լուծումը, բայց հարցեր էլ կան, որ դեռևս պարզաբանման կարիք ունեն և այսօր էլ զբաղեցնում են հետազոտողներին։ Այս առումով հետաքրքրական է, անշուշտ, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ն. Յուզբաշյանի՝ վերջերս հրապարակած «Հայ-վրացական ապստամբությունը սասանյան իշխանության դեմ (482—484 թթ.)» հոդվածը[1], ուր հեղինակը V դարի ազատագրական մեծ մաքառումի և հատկապես՝ դարի երկրորդ խո-

---

1. Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, էջ 47—63։

շոր ազատագրական կռվի՝ Վահանանց ապստամբության կապակցությամբ արծարծում է նաև Վարդանանց պատերազմի հետ կապված որոշ հարցեր, փորձում նոր լուսաբանություն տալ մի քանի հայտնի փաստերի, որոնք իրոք ուշագրավ են, բայց ոչ միշտ անվիճելի[2]։ Դրվատելի է, անշուշտ, պատմական հայտնի փաստերի ու պատմագիտական եզրահանգումների նկատմամբ հեղինակի քննական մոտեցումը, և հազիվ թե մասնագետ պատմաբաններն անտարբեր անցնեն հետազոտողի հարցադրումների կողքով։ Դրա հետ մեկտեղ, սակայն, հեղինակն առաջադրում է եզրահանգումներ, որոնք լուրջ տարակույսների տեղիք են տալիս։

Հեղինակի շոշափած խնդիրներից այստեղ մեզ հետաքրքրում է միայն մեկը՝ Վարդանանց պատերազմի նախօրեին և պատերազմի ընթացքում Հայոց թագավորության վերականգնման խնդիրը, որ, ինքնին հասկանալի է, ժամանակին լոկալ բնույթ չի ունեցել, այլ վերաբերել է ազատագրական այդ մեծ կռվի գլխավոր նպատակին, նրա բուն էությանը։ Հենց սկզբից ասենք, որ հետազոտողի դիրքորոշումն այս առթիվ անընդունելի է։

Նախքան հարցի բուն քննությանն անցնելը, տեսնենք, թե ո՞րն է հեղինակի հիմնական ելակետը։ Նա գրում է. «Մեծ Հայքի բաժանումը Պարսկաստանի ու Բյուզանդական կայսրության միջև (387 թ.) և Արշակունյաց հարստության վերացումը հայոց աշխարհի արևելյան հատվածում (428 թ.) դիտվել են և շարունակում են դիտվել որպես շրջադարձային երևույթներ. կորցնելով սեփական պետականությունը, Հայաստանը ոտք է դնում մի բոլորովին նոր դարաշրջան։ Արդյո՞ք արդարացված է այդպիսի ծայրահեղ տեսակետը»[3]։ Ակնհայտ է, որ նման հարցադրումը ինքնին ենթադրում է հարցի բացասական պատասխանը։ Հետազոտողի մոտեցման հիմքը երևում է մեջ բերված տողերի անմիջական շարունակությունից, ուր ասված է. «Ինչ խոսք, և՛ 387 թ., և՛ 428 թ. խորհրդանշում են հայոց պատմության մի նոր շրջանի սկիզբ։ Սակայն զրկվելով սեփական թագավորական իշխանությունից, հայերը կարողացան պահպանել նախկին պետական կառուցվածքի մի շարք կարևոր հաստատություններ և դրանով ապահովեցին լայն չափերի հասնող ինքնավարություն»[4]։ Ահա այն մեկնակետը, որ հեղինակին հիմք է տվել ըստ էության կասկածի տակ առնելու, «ծայրահեղ տեսակետ» հայտարարելու երկու աշխարհակալ տերությունների՝ Պարսկաստանի ու Արևելյան հռոմեական կայսրության միջև Մեծ Հայքի բաժանվելը, օտարի դերիշխանության տակ ընկնելն ու սեփական թագավորական իշխանության՝ Արշակունյաց հարստության վերացումը «շրջադարձային երևույթներ» համարելու միանգամայն հիմնավոր տեսակետը։ Կարծում ենք, որ ակնհայտ է այստեղ հետազոտողի վրիպումը։ Որքան էլ կարևորություն տրվի, մեծ նշանակություն վերագրվի «նախկին պետական կառուցվածքի մի շարք կարևոր հաստատություններ» պահպանելու միջոցով հայերի «լայն չափերի հասնող ինքնավարություն» ապահովելուն (որը, ի դեպ, ինչպես կտեսնենք, Արշակունյաց հարստության վերացումից հետո շատ կարճ կյանք ունեցավ, ընդամենը շուրջ երկու տասնամյակ տևեց), միևնույն է, և՛ 387 թ., և՛ 428 թ. հայերի համար եղան իրոք «շրջադարձային երևույթներ» (և ոչ թե սոսկ «խորհրդանշում են հայոց պատմության մի նոր դարաշրջանի սկիզբ», ինչպես անորոշ կերպով, խնդիրը անտեղի մեղմացնելով կարծում է Կ. Յուզբաշյանը), որոնք բազում նոր դժբախտությունների դուռ հանդիսացան, ողբերգական հետևանքներ ունեցան հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի առումով, նրա պատմական հեռանկարի տեսակետից։ Ա՛յս արդեն անվիճելի

---

[2] Արժեքավոր է նաև Կ. Ն. Յուզբաշյանի՝ մինչ այդ տպագրած «Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը» հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1), ուր մատենագրական աղբյուրների որոշ տվյալների նոր մեկնաբանությամբ հեղինակին հաջողվել է ճշտել այդ կարևոր իրադարձության սկզբնավորման տարեթիվը։

[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, էջ 47 (ընդգծումը մերն է — Վ. Ն.)։

[4] Նույն տեղում։

ճշմարտություն է և շատ լավ հետազոտված է հայ պատմական գիտության մեջ, ուստի և հայտնի փաստերն ու պատմագիտական հիմնավոր եզրահանգումներն այստեղ երկրորդելու անհրաժեշտություն չկա։ Միայն ավելորդ չէր լինի, թերևս, 387 թ. կապակցությամբ հեղինակին հիշեցնել Փավստոսի խոսքերը. «...նուազեցաւ բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակ և յապայ»[5], իսկ 428 թ. առթիվ մատնանիշանել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջին հատվածը՝ «Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց և եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի»։ Այնպես որ XX դարի հեռվից, առանց թյուրիմացությունների մեջ ընկնելու, ըստ երևույթին այնքան էլ դյուրին չէ պատմական անխախտ ճշմարտությունների վերանայումը։

Այժմ անցնենք մեզ հետաքրքրող հարցի քննությանը՝ ըստ էության։

Կ. Յուզբաշյանը զարգացնում է այն թեզը, որ «...չնայած Հայաստանը գտնվել է պարսից շահնշահի գերիշխանության ներքո, երկրում տիրել է որոշ հավասարակշռություն, և հենց այդ վիճակն էին ձգտում ապահովել հայերը։ Պոռթկումն առաջանում էր այն դեպքում, երբ այդ հավասարակշռությունը խախտվում էր»[6]։ Իր այս մտքին հեղինակը կցել է հետևյալ ծանոթությունը. «Այն տեսակետը, թե իբր V դարում Հայաստանում սեփական թագավորությունը վերականգնելու փորձեր են եղել, թվում է մերժելի։ Եղիշեի տվյալները հիմք չեն տալիս նման եզրակացության, իսկ ուշ շրջանի հեղինակների պատմածը առասպելական բնույթ է կրում. հակառակ կարծիքը տե՛ս В. С. Налбандян. Егишэ. Ереван, 1972, с. 153—162»[7]։

Նկատենք, ի դեպ, որ թեև այստեղ հետազոտողը հղում է 1972-ին լույս տեսած մեր «Егишэ» մենագրությանը, բայց խնդրո առարկա հարցին մենք նվիրել ենք դրանից շուրջ երկու տասնամյակ առաջ հրապարակած՝ «451 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը» հոդվածը[8]։ Քննարկվող հարցին սերտորեն առնչվում է դրանից երկու տարի ավելի վաղ հրապարակված մեր մեկ այլ՝ «Հայերի կողմից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թվի ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջ» հոդվածը[9]։

Սույն հոդվածում մենք ստիպված ենք հիմնականում կրկնելու տարիներ առաջ մեր ասածը, երկրորդելու մատենագրական աղբյուրների՝ մեր օգտագործած տվյալներն ու դրանց քննության արդյունքները, միաժամանակ բերելով որոշ նոր փաստեր, անելով անհրաժեշտ հավելումներ։

Ամենից առաջ a priori մի հարց է ծագում. պարսից դաժան տիրապետության, օտարի սոցիալ-քաղաքական ծանր լծի ու կրոնական անագորույն հալածանքների դեմ ծովացող համընդհանուր դժգոհության, հայ հասարակության բոլոր խավերի, ողջ ժողովրդի ռազմաքաղաքական բուռն ակտիվության, հայրենասիրական բացառիկ ոգորումների մի այնպիսի իրադրության պայմաններում, որպիսին եղել է Ավարայրին նախորդող շրջանը և ինքը՝ Ավարայրի հերոսամարտը, կարո՞ղ էր կյանքի չկոչվել դրանից ընդամենը երկու տասնամյակ առաջ կործանված սեփական թագավորությունը (թո՛ղ որ այն լինի կիսանկախ), հայ պետականությունը վերականգնելու գաղափարը։ Պատմական տրամաբանությունն ինքնին թելադրում է հարցի դրական պատասխան։ Եվ

---

[5] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 393—394։

[6] «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, էջ 48 (ընդգծումը մերն է—Վ. Ն.)։

[7] Նույն տեղում, ծան. 3։

[8] Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 12, էջ 69—73։ Հոդվածի առաջին պարբերության մեջ սպրդել է մի վրիպակ. «Տիզբոնի» փոխարեն տպված է «Նվարսակ»։

[9] Տե՛ս նույն տեղում, 1951, № 10, էջ 91—115։ Հիշյալ հոդվածները, խմբագրական շտկումներով մտել են մեր «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը» մենագրության (Երևան, 1955), նույն աշխատության ռուսերեն հրատարակության (Երևան, 1956), ինչպես նաև հոդվածագրի հղած «Егишэ» մենագրության մեջ։

ապա. դիցո՛ւք, թե հայերն Ավարայրում կատարյալ հաղթանակի հասան. այդ պարագայում Հայաստանում ի՞նչ պետական կարգ պիտի ստեղծվեր, հասարակապետությո՞ւն պիտի ծնվեր (ինչպես լրջորեն կարծել է Լեոն իր «Վարդանանք» պատմական դրամայում), թե՞ հաղթանակ նվաճած հայերը պարտված պարսիկներից ծնկաչոք պիտի աղերսեին վերադարձնել իրենց նախկին կիսանկախ վիճակը...

Այս՝ ի միջի այլոց։

Այժմ անդրադառնանք փաստերին, տեսնենք, թե քննության առարկա հարցի առթիվ ի՞նչ վկայություններ են պահպանել պատմական աղբյուրները և որքանո՞վ իրավացի է հետազոտողը «ուշ շրջանի հեղինակների պատմածը» «առասպելական» հայտարարելով՝ առանց որևէ ապացույց բերելու։

Իրավ է, մեզ հետաքրքրող հարցի առթիվ պատմական տվյալները վերաբերում են ուշ դարերին, բայց, ինչպես կտեսնենք, այս հանգամանքը բնավ չի ստվերում նրանց պատմական հավաստիությունը։ Իսկ թե ինչու Եղիշեի երկում ուղղակի վկայություններ չկան հայոց թագավորությունը վերականգնելու փաստի առթիվ՝ այդ մասին խոսք կլինի իր տեղում։

Պատմական աղբյուրները հիմք են տալիս պնդելու, որ Վարդանանց պատերազմի նախօրեին ու պատերազմի ընթացքում, իրոք, հայ հասարակության վերնախավի շրջանում ոչ միայն լրջորեն խմորվել է հայկական թագավորությունը, ինքնուրույն պետականությունը վերականգնելու գաղափարը, այլև այդ գաղափարի իրականացման ուղղությամբ գործնական լուրջ քայլեր են արվել։

Այսպես, անդրադառնալով Ավարայրի ճակատամարտին նախորդող իրադարձություններին, Թովմա Արծրունին (IX—X դդ.) վկայում է. «Եւ քանդեն, աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԴիւտ. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և քաղաքն (խոսքը Դվինի մասին է—Վ. Ն.) որմափակոք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս։ Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց... քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ։ Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին գնացին առ մեծն Վարդան. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան առաջադոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»[10]։ Ցավոք, պատմիչը խոսքը չի մանրամասնում, ոչինչ չի հաղորդում Վահան Արծրունուն թագավորեցնելու հարցում հայ նախարարների անմիաբանության պատճառների, ինչպես նաև Մամիկոնյան տան նահապետին նախապատվություն տալու հանգամանքների մասին։ Բոլոր դեպքերում, սակայն, Սահակ Պարթևի թոռան, Մամիկոնյան ազդեցիկ նախարարական տան նահապետի, հայոց զորքերի քաջարի սպարապետի նկատմամբ նախարարների նման վերաբերմունքը միանգամայն բնական պիտի համարել։

Կարծում ենք, որ Թովմայի վկայության հավաստիությունը կասկածի տակ առնելու (առավել ևս՝ այն «առասպելական» համարելու) հիմքեր չկան, երբ մանավանդ նկատի ենք ունենում, որ վկայողը Արծրունյաց նախարարական տան տոհմային պատմիչն է, և որպես այդպիսին, ինչպես հայտնի է, մեր հին պատմիչներից ամենակողմնակալներից մեկը թերևս, որ ամեն առիթով բարձրացնում է Արծրունիներին՝ ետ մղելով մյուս նախարարական տոհմերի ներկայա-

---

10 Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. ի լոյս էած Ք<երոբէ> Պ<ատկանեան>. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 78—79։ Ժամանակին Լեոն նշել է այս փաստը, բայց ըստ երևույթին առանձին արժեք չտալով դրան, քննարկման առարկա չի դարձրել։ Տե՛ս նրա Հայոց պատմություն. հ. 2, Երևան, 1947, էջ 47։

ցուցիչներին։ Դեռևս 1953 թ. հրապարակած մեր հոդվածում[11] մենք նշել էինք, որ եթե Թովման իր ձեռքի տակ չունենար հին դարերից եկող որևէ գրավոր աղբյուր, հազիվ թե հորիներ մի պատմություն, ուր բացահայտորեն նսեմանում է Արծրունյաց տոհմի տանուտերը և նախապատվությունը տրվում Արծրունիների վաղեմի մրցակից Մամիկոնյանին։ Մեր այս կարծիքին ժամանակին համամիտ է եղել հայ ազատագրական շարժումների հմուտ հետազոտող, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը։ «Հինգերորդ դարից մեծ հասած աղբյուրների մեջ,— գրում է նա,— Թովմայի հաղորդածը հավաստող այլ վկայություններ չկան։ Կարող էր կասկած լինել, թե Թովման հնարում էր այս պատմությունը՝ Արծրունյաց նահապետին մեծարած լինելու համար։ Սակայն, ինչպես ճիշտ դիտում է Նալբանդյանը, Վահանին թագավոր կարգելու մասին նրա պատմածը չէր փայփայում Արծրունյաց տան ինքնասիրությունը. Արծրունյաց նախարարն իսկ խոնարհվում էր Մամիկոնյան տան պետի հեղինակության առաջ»։ Աշ. Հովհաննիսյանը ևս կարծում է, որ «իր նկարագրած դեպքի համար Թովման օգտվել էր, ըստ երևույթին, մեր ձեռքը չհասած հին մի աղբյուրից»։ Հետազոտողի կարծիքով «V դարի հանրածանոթ աղբյուրներից զատ, նրա տրամադրության տակ կար «Հայոց մնացորդաց պատմութիւն» կամ, ինչպես գրում էր Թովման, «Մնացորդք պատմագրացն առաջնոց» գիրքը, ուր զետեղված էին Մասբրե Վերծանողի, նրա Մովսես եղբոր (որին ոմանք, թվում է թե սխալաբար, նույնացնում են Խորենացու հետ) և Թեոդորոս Քերթողի պատմական գրվածքները։ ...Մի այլ տեղ, խոսելով Վարդան Մամիկոնյանի և Վահան Արծրունու նահատակության մասին, Թովման նշում էր, որ իր նկարագրած մանրամասնություններն առել է Աբրահամ Խոստովանողի համառոտ պատմությունից»[12]։

Մեզ զբաղեցնող հարցի առթիվ շատ ուշագրավ է նաև մեկ այլ աղբյուր՝ Մեսրոպ Վայոցձորցու (X դար) «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Հայոց Հայրապետի» երկի հիշատակարանը, ավելի ստույգ՝ այդ հիշատակարանի ձեռագիր ընդօրինակությունները[13]։ Վայոցձորցու երկի 1297 թ. ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Վարդան Մամիկոնեան բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց... և արիաբար ընդդիմամարտեալ քաջութեամբ ԽԲ պատերազմացն պարսկական զաւրացն, որ դիմէին ի վերայ նորա. և յաղթեալ նոցա քաջն Վարդան դարձուցանէր զնոսա և յաղթահարէր զնոսա վերին աւգնականութեամբն և զաւրութեամբ սուրբ խաչին։ Ու յետ բազում յաղթութեան նահատակեալ առնոյր մարտիրոսական պսակն յաւուրս Յազկերտի պարսից արքայից արքայի»։ «...Արդ այս համառաւտ ասացաւ. զայլսն ամենայն ի սուրբ Վարդանանց գրոցն գտցես զբաւականդակն»[14], որով հեղինակը հղում է Ծղիշեի մատյանը։ Նույն տեղեկությունը տե՛ս նաև Վայոցձորցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Հայոց Հայրապետի» երկի 1441 թ. ձեռագիր ընդօրինակության հիշատակարանում[15]։

Մեսրոպ Վայոցձորցու վկայությունը այն մասին, թե Վարդան Մամիկոնյանը «բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց» պարզ մատնանիշ է անում, որ նա տիրակալություն է առել Արշակունյաց թագավորների ոտանին։ Այս տեղեկության հավաստիությունը ևս կասկածի տակ առնելու հիմքեր չկան, մանավանդ երբ նկատի ենք ունենում Վայոցձորցու «Պատմության» բնույթը։ «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Հայոց հայրապետի» երկը սոսկ քաղագրու-

---

11 Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 12, էջ 70։

12 Աշոտ Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք առաջին, Երևան, 1957, էջ 97—98։

13 Մեսրոպ Վայոցձորցու «Պատմութիւնը» զետեղված է «Սոփերք հայկականքի» Զ հատորիկում, բայց հիշատակարանը տպագրված է կրճատումով. այնտեղ բացակայում են մեզ հետաքրքրող տեղեկությունները։

14 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5980, էջ 121ա-բ։

15 Նույն տեղում, ձեռ. № 1665, էջ 102ա։

թյուն է, որի մասին վկայում է ինքը հեղինակը՝ իր երկի հիշատակարանում գրելով. «Ի ՆԺԶ (967) թուականիս Հայոց... ես Մեսրովպ նուաստ քահանայ ի Վայոց ձորոյ ի գեղջէ Հողոցմանց... մեծ ցանկութեամբ ծաղկաքաղ արարի զզիրս զայս ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց. զյաղթութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսէսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից... եւ արդ զայս հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութիւն...»[16]։ Եթե Վարդան Մամիկոնյանի՝ Արշակունյաց ոստանին տիրակալություն անելու փաստը հեղինակին հայտնի չլիներ որևէ հնագույն աղբյուրից, հենց նրա մատնանշած «յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդաց պատմութիւն»-ից, ապա ի՞նչ հիմք կա կարծելու, որ այն հնարել է ինքը՝ Մեսրոպը։ Այստեղ էլ պատմիչի վկայության հավաստիությունը կասկածի տակ առնելու որևէ լուրջ հիմք չկա։

Հարկ ենք համարում նախկինում մեր օգտագործած տվյալների վրա ավելացնել նաև Վարդան պատմիչի վկայությունները, որոնք եթե անգամ որևէ կարևոր նորություն չեն բերում, ապա գեթ յուրովի հաստատում են Թովմա Արծրունու և Մեսրոպ Վայոցձորցու վկայությունները։ Այսպես, անդրադառնալով Ավարայրին նախորդող տարիների իրադարձություններին, պատմիչը կարճառոտ գրում է. «Իսկ նախարարացն ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վարդան։ Զայս ժամանակօք դարձան ի թարգմանութենէ Ղեւոնդ, Կորիւն և Արձան...»[17]։ Հեղինակն այնուհետև շարունակում է. «...հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց, որովք տայր պատերազմ ընդ Պարսս զամս իններեասն, յաղթեալ քառասուն և երկու պատերազմաց, մինչև ցկատարումն իւր մարտիրոսութեամբ...»[18]։ Հազիվ թե հնարավոր է ապացուցել, թե Վարդանի այս վկայությունները սոսկ հորինվածքներ են և չեն ծագում մեզ անհայտ որևէ հնագույն աղբյուրից։

Քննարկված փաստերի լույսի տակ թվում է, թե նոր իմաստ է ստանում Եղիշեի հաղորդած մի տեղեկությունը։ Պատմիչը վկայում է, որ երբ Վասակ Սյունին դավաճանում է ապստամբության ուխտին ու հեռանում՝ իր հետ տանելով մի շարք նախարարների, Վարդանը «հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրս տայր նոցա, զի զեռ ևս ինքն ունէր զամենայն ուշխարհն»[19]։ Պատմիչը, ինչպես տեսնում ենք, մատնանիշ է անում նաև Վարդանի լայն լիազորությունների ֆեոդալական իրավական հիմքը՝ իր մտքի շարունակության մեջ հատուկ շեշտելով Մամիկոնյան տան նահապետի՝ Արշակունիների ոստանին տիրակալելու հանգամանքը. «...քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն»[20]։ Երկրորդական հանգամանք չէ, հարկավ, որ ավելի ուշ նույն կերպ էր բնութագրում Վարդան Մամիկոնյանի տիրական դիրքը Մեսրոպ Վայոցձորցին՝ դարձյալ ընդգծելով Վարդանի՝ հայոց արքունի ոստանին տիրակալելու պարագան («...բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց...»)։

Վերը շարադրածից միանգամայն աներկբա է եզրակացությունը. ստանալով նախարարների (հասկանալի է, խոսքը ապստամբությանը հարած նախարարների մասին է) համաձայնությունն ու վստահությունը («միաբանութեամբ նախարարացն»), Վարդան Մամիկոնյանը ազատ ու ինքնակամ տնօ-

---

16 Մեսրոպ Վայոցձորցի. Պատմութիւն սրբոյն Ներսէսի Հայոց հայրապետի.— Սուիերք հայկականք, հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 138—139։

17 Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 52—53։

18 Նույն տեղում, էջ 53։

19 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 99։

20 Նույն տեղում։

րինել է «ետ կացածների» կալվածքներն ու զորական ուժերը՝ դրանք տալով ապստամբության ուխտին դավաճանածների մերձավոր ազգականներին։ Այս հանգամանքը չափազանց կարևոր է մեզ հետաքրքրող հարցի մեկնաբանության առումով, որ մատնանիշ է անում Վարդանի իրավական լիազորությունների ընդարձակ շրջանակը։ Որքան մեզ հայտնի է, ֆեոդալական Հայաստանում նախարարական տների կալվածքների ու զորական ուժերի նկատմամբ նման իրավունքը (և այն էլ ոչ միշտ և ոչ ամբողջությամբ) վերապահված է եղել միայն Արշակունի թագավորներին, բայց ոչ երբեք սպարապետներին։

Մտեփանոս Տարոնեցի Ասողիկի մի վկայությունը դիտել է տալիս, որ Վարդանի լիազորությունները տարածվել են անգամ կրոնաեկեղեցական կյանքի հարցերի վրա. մասնավորապես այնպիսի հույժ կարևոր մի խնդրի, որպիսին էր երկրի հոգևոր առաջնորդի ընտրությունը։ Պատմիչը վկայում է. «...յետ մահուանն Սուրմակայ ժողովեալ հայրապետացն Հայոց՝ խնդրեալ գտին քահանայ ոմն Յովսէփ անուն, որ լեալ էր աշակերտ Մեծին Մեսրոպայ, ի գաւառէն Վայոց ձորոյ ի գեղջէն Հողոցիմայ։ Եւ հրամանաւ Վարդանայ նստուցին յաթոռ կաթողիկոսութեան, ամս Բ»[21]։

Այսպիսով. մատենագրական աղբյուրների տվյալների քննությունը հաստատում է այն իրողությունը, որ, եթե անգամ Վարդան Մամիկոնյանը դեռևս պաշտոնապես թագակիր չէր, չէր անցել թագադրման հետ կապված արարողությունները (Ավարայրին նախորդող բուռն իրադարձությունները հազիվ թե ընձեռեին այդ հնարավորությունը), այնուամենայնիվ ապստամբության ուխտին հավատարիմ մնացած նախարարների կամքով և ընտրությամբ նա կարգվել է «տեղապահ թագաւորութեան» (Վարդան վարդապետ)՝ ստանալով ամենալայն լիազորությունները՝ ինչը կարող էր ունենալ երկրի թագավորը. նա տիրակալել է Արշակունիների ոստանին՝ «Վարդան Մամիկոնեան բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց» (Մեսրոպ), նրան է վստահվել Հայաստանի տանուտերությունը՝ զվերակացութիւն Հայոց» (Թովմա), նրա ձեռքին է գտնվել Հայոց երկրի քաղաքական իշխանության ղեկը՝ «ինքն ունէր զամենայն աշխարհն» (Եղիշե)։

Ջնայած քաղաքական կյանքի ձախորդ հանգամանքներին, ինչպես երևում է, հայոց ինքնուրույն պետականության, ազգային թագավորության վերականգնման գաղափարը (անկախ նրա իրականացման կարելիությունից) բավական զորեղ է եղել V դարում (փակագծում ասենք, որ այն երբեք չի բաժանվել հայից՝ ընդհուպ մինչև XX դարը)։ Այդ գաղափարի իրականացման երազանքը բնորոշ է եղել դարի հեռատես գործիչներին, նշանավոր մտածողներին։ Բավական է հիշել Խորենացու «Հայոց պատմությունը», որ ամբողջովին ներթափանցված է հայոց թագավորությունը վերականգնված տեսնելու երազանքով ու հույսով։ Կարծում ենք նաև ավելորդ չի լինի վերհիշել Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» երրորդ դրվագի այն հատվածը, ուր պատմվում է Վահան Մամիկոնյանի մարզպան կարգվելու մասին։ Հատկանշական է, որ բաժանելով համընդհանուր ցնծությունը, Հովհան Մանդակունի կաթողիկոսը սաղմոսել է տալիս Աստվածաշնչի Թագավորության գրքից այն տեղը, ուր խոսվում է Դավթի՝ իր Սողոմոն որդուն թագավորեցնելու մասին. «Եւ սրբոյ կաթողիկոսին Հայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւետաւորութիւնն (խոսքը պարսից արքայի՝ Վահանին մարզպան կարգելու հրովարտակի մասին է— Վ. Ն.), շնորհեալ յԱստուծոյ ի ժամանակս երանելւոյն, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն. «Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայէլի». և կարդացմունս հրամայէր՝ զտեղի ելիցն Իսրայէլի ի ծառայութենէն Փարաւովնի, և ի Թագաւորութենէն՝ զընթերցուածն՝ ուր թագա-

---

21 Մտեփանոս Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 78։ Ակամա հիշում ես Արշակ II-ի հրամանով Ներսեսին կաթողիկոս կարգելը։

ւորեցոյց Դաւիթ զորդին իւր զՍողոմոն»[22]։ Փաստը, իհարկե, սիմվոլիկ բնույթ ունի, բայց միաժամանակ այստեղ չի կարելի չնշմարել ժամանակին բնորոշ մտայնության յուրովի գրական անդրադարձումը։

Այժմ հարց է ծագում. ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ հայ նախարարները, որոնք, ինչպես հայտնի է, դրանից ընդամենը երկու տասնամյակ առաջ փոքր դեր չէին կատարել Արշակունյաց հարստության վերացման գործում, Ավարայրի նախօրյակին փոխեցին իրենց դիրքը և անգամ նախաձեռնեցին հայկական թագը վերականգնելու գործը։

Հարցի պատասխանն, անշուշտ, պիտի որոնել V դարի 40-ական թթ. (թերևս ավելի ստույգ՝ այդ թվականների երկրորդ կեսին) Հազկերտ II-ի նոր միջոցառումների հետևանքով Հայաստանում ստեղծված բարդ իրավիճակի մեջ։ Հենվելով սկզբնաղբյուրների տվյալների վրա և օգտագործելով հայ պատմական գիտության, մասնավորապես ակադեմիկոս Հ. Մանանդյանի հետազոտությունների արդյունքները, մենք այդ հարցին անդրադարձել ենք Վարդանանց պատերազմի սոցիալ-քաղաքական պատճառների լուսաբանության ընդհանուր ասպեկտով[23]։ Այստեղ միայն համառոտ կխոսենք այն էական հանգամանքների մասին, որոնք հարկադրեցին հայ ազնվականությանը փոխել դիրքորոշումը։

Հայտնի իրողություն է, որ վերացնելով Արշակունյաց հարստությունը, պարսից արքունիքն սկզբում ձեռք չտվեց հայ նախարարների ժառանգական իրավունքներին ու արտոնություններին, որի շնորհիվ հայերին հաջողվեց Հայաստանի՝ պարսից գերիշխանության տակ անցած մասում առայժմ, իրոք, ապահովել ներքին ինքնավարությունը։ Այդ է հաստատում, ինչպես նկատվել է, Եղիշեի մի կարևոր վկայությունը. «Եւ իբրև զնա (հայոց Արտաշես թագավորին—Վ. Ն.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[24]։

Բայց այդ վիճակը երկար չշարունակվեց։ Հազկերտ II-ը շուտով փոխում է քաղաքականությունը, մի շարք նոր միջոցներ է ձեռնարկում, որի առթիվ արժեքավոր տեղեկություններ է տալիս Եղիշեն[25]։ Պարսից արքունիքը գործը հետևողականորեն առաջ է տանում վաղօրոք խնամքով մշակված ծրագրով։ Նախ երկրից դուրս է բերվում փառաբանված հայոց այրուձին՝ հայկական բանակի գլխավոր ուժը, և վասալ մյուս երկրների զորաբանակների հետ («որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ», ինչպես ասում է Եղիշեն) ուղարկվում հեռավոր երկրներ՝ քուշանների դեմ պատերազմելու։ Հայտնի է, որ հայոց այրուձիի ծանրությունն սմբողջովին ընկած էր նախա-

---

22 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյանց. Տփղիս, 1904, էջ 178։

23 Տե՛ս մեր «Հայերի կողմից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թվի ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջը».—ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 10։

24 Եղիշե, էջ 6։ Ուշադրության արժանի է, ի դեպ, որ բերված տողերի անմիջական շարունակության մեջ պատմիչը հարկ է համարել շեշտել. «Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագոյն կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից...» (նույն տեղում)։ Պատմիչի այս տողերը կարծել են տալիս, որ նրան օտար չի եղել այն մտայնությունը, թե հավատի հարցը, որքան էլ այն մեծ կարևորություն ունենար, այնուամենայնիվ ինքնակա հարց չէր, որոշ իմաստով ենթակայական էր քաղաքականին։

25 Այս մասին մանրամասն տե՛ս վերը հիշված մեր հոդվածը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 10, էջ 95 և հտ.)։ Աղբյուրների համապատասխան վկայությունները մեջ է բերել նաև Կ. Յուզբաշյանը։

րարների վրա, այն զինվում և պահվում էր նախարարների ծախքով։ Պատմիչը չի մոռանում հիշատակել, որ հայոց այրուձին կազմված էր «ազատներից», «ազատորդիներից» և «արքունի տանէն զոստանիկս», որ, հարկավ, երկրորդական հանգամանք չէր։ Այրուձիի դուրսբերումով երկրի ռազմական ներքին հզորությունը թուլացնելուց հետո, Հազկերտ II-ը ձեռք է բարձրացնում հայ նախարարների ավատական-ժառանգական արտոնությունների վրա՝ կիրառելով չափազանց նենգ ու խարդախ միջոցներ, որոնց նպատակն էր այդ արտոնությունների սահմանափակումը և այնուհետև՝ դրանց վերացումը, նախարարությունների տկարացումը, նախարարական դասի բարոյական այլասերումը, նրա՝ առանց այն էլ թույլ միասնության քայքայումը և, հնարավոր է՝ փաստորեն երկրի իշխող միակ քաղաքական ուժի ոչնչացումը[26]։ Պարսից արքունիքը այդ միջոցներով ձգտում էր հայ նախարարությունների նկատմամբ սահմանել նույն կարգն ու վերաբերմունքը, ինչ որ գոյություն ուներ Պարսկաստանի մյուս մարզերում՝ Հայաստանը դիտելով որպես իր ընդարձակ տերության սովորական մի մարզ։ Միանգամայն հնարավոր է թվում Մանանդյանի եզրահանգումը. «Ինչպես հայտնի է, Սասանյան Պարսկաստանում,— գրել է նա,— որի սոցիալական ու տնտեսական հատուկ կարգերն ու կառուցվածքը նման ու համապատասխան էին ֆեոդալական Հայաստանի ներքին կազմակերպության, խիստ զորեղ էր պետության կենտրոնացումը։ Թագավորական իշխանությունն այստեղ տնօրենն էր ամբողջ երկրի և իրական տերը ու հրամայողը ֆեոդալ իշխանավորների։ Իբրև ֆեոդալական զորեղ միապետություն՝ Պարսկաստանը, բնականաբար ձգտում էր այժմ սահմանափակել նախարարական իշխանությունների ինքնուրույնությունը և ենթարկել նրանց թագավորական գահի անմիջական ազդեցությանը»[27]։

Հազկերտ II-ի հրամանով վերացվում են արքունի կարևոր պաշտոնների՝ «գործակալությունների», ինչպես նաև ըստ էության՝ նախարարական տոհմերի նահապետների ժառանգականության իրավունքները, խախտվում է «Գահնամակով» սահմանված կարգը և այլն։ Նախարարությունների նկատմամբ պարսից արքունիքի վարած նենգ քաղաքականության մասին գաղափար են տալիս Եղիշեի պերճախոս վկայությունները։ Ըստ Եղիշեի Հազկերտը «...սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զոգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակէր ի միմեանց»[28]։

Չափազանց ուշագրավ են Եղիշեի հաղորդած այն տվյալները, որոնք վերաբերում են պարսից արքունիքի՝ հայ իշխանական դասի բարոյական այլասերման ուղղությամբ կիրառած միջոցներին։ «Պատրէր (Հազկերտ II-ը) զոմանս ի նոցանէ (հայ նախարարներից—Վ. Ն.) ոսկւով և արծաթով, և զբազումս այլով եւս առատ պարգևօք. իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք»[29]։ Դենշապուհի աշխարհագրի հետևանքների մասին խոսելիս պատմիչը հաղորդում է. «...զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»[30]։ Խոսելով քուշանների դեմ ուղարկված հայոց այրուձիի կրած զրկանք-

---

26 Հազկերտ II-ի ձեռնարկած այդ նոր միջոցների հիմնավոր մեկնաբանությունը տվել է ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» մենագրության մեջ (Երևան, 1934)։

27 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 287—288։

28 Ե ղ ի շ ե, էջ 16։

29 Նույն տեղում, էջ 17։

30 Նույն տեղում, էջ 23։ Այստեղ մեր նպատակից դուրս ենք համարում Դենշապուհի աշխարհագրի մյուս ծանր հետևանքների մասին խոսելը, որ վերաբերում են եկեղեցու և հոգևոր դասի ապահարկության իրավունքի վերացմանը, երկրի վրա դրված հարկերի ծանրացմանն ու հարկապահանջության անօրինական ձևերին, հազարապետի (որ «իբրև զհայր վերակացու համա-

ների մասին, եղիշեն շարունակում է. «Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարշարէին, զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել։ Եւ զոմանս ի նոցանէ ճեռացուցին և fարշեցին յազգուական պատուոյն անարգեալ»[31]։ Հենվելով այս տեղեկության վրա՝ ակադ. Հ. Մանանդյանը կարծում է, որ Հաղկերտ II-ը անգամ իրեն իրավունք է վերապահել հայ ազնվականներին զրկել ազնվական պատվից։

Պիտի կարծել, որ իրականում հիմնականում այս հանգամանքներն են պայմանավորել հայ նախարարությունների դիրքափոխությունը Ավարայրի նախօրեին ինքնուրույն թագավորական կարգի նկատմամբ։ Փութացնելով Արշակունյաց հարստության վերացումը, հայ նախարարներն, ըստ երևույթին, այն հույսն էին փայփայում, թե վասալական կախումը հեռավոր Տիզբոնում նստած պարսից արքայից իրենց կազատի Արշակունի թագավորների կաշկանդումներից և թերևս ավելի կընդարձակվեն իրենց դասային արտոնությունները։ Բայց դաժան իրականությունը կարճ ժամանակամիջոցում հակառակն ապացուցեց. ոչ միայն չպահպանվեց զարերով ավանդաբար ձեռք բերված, այլև կորսվեց եղածը։

Գուցե և հնարավոր կլիներ մտածել, թե հայ նախարարների նկրտումները կարող էին սահմանափակվել նախկին արտոնություններն ու ժառանգական իրավունքները վերստանալու և ինքնավարության պահպանման ձգտումով, ինչպես կարծում է Կ. Յուզբաշյանը։ Բայց օրինական հարց է ծագում, թե Ավարայրին նախորդող իրադրությունը բավական չէ՞ր նախարարներին համոզելու, որ պարսից գերիշխանության պայմաններում ինքնավարությունը հաստատուն լինել չի կարող, և, իսկապես ի՞նչ երաշխիքներ կային նրա տևական գոյության համար։ Թվում է, թե այստեղ, ինչպես ասվում է, կոմենտարներն ավելորդ են։

Փաստերից բացի պատմական տրամաբանությունն էլ հարկադրում է մտածել, որ հայ նախարարությունները, համենայն դեպս Վարդանի գլխավորած ապստամբությանը հարող նախարարները, իհարկե, ավելի բանական և շահեկան պիտի համարեին հակվելու ինքնուրույն թագավորությունը վերականգնելու մտքին և, ինչպես ցույց տվեց մատենագրական տվյալների քննությունը, իրականում հենց այդպես էլ եղել է։ Ինքնուրույն ազգային պետականության վերականգնման գաղափարը միանգամայն համապատասխանում էր և՛ երկրի իշխող աշխարհիկ վերնախավի, և՛ եկեղեցու ու հոգևորականության, և՛ հայ հասարակության մյուս շերտերի, ամբողջությամբ վերցրած՝ ողջ հայ ժողովրդի քաղաքական շահերին։ Ստեղծված իրադրության պայմաններում, կրկնում ենք՝ անկախ գաղափարի իրականացման հնարավորությունից. դա էր փրկության առավել հաստատուն ճանապարհը։

Նույն հոդվածում մենք հիմնականում վերլուծեցինք մատենագրական աղբյուրների այն տվյալները, որ տարիներ առաջ մեզ հիմք էին տվել առաջադրելու, և այժմ էլ իրավունք են տալիս նույն համոզմունքով պնդելու Ավարայրի ճակատամարտի նախօրեին ու Վարդանանց պատերազմի ընթացքում հայկական ինքնուրույն թագավորությունը վերականգնելու հարցը դրված լինելու տեսակետը։

Ավելորդ չենք համարում նշել, որ մեր առաջ քաշած վարկածը ժամանակին ընդունվեց այնպիսի մի հմուտ և խստապահանջ պատմաբանի կողմից, որպիսին էր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը[32]։ Նշանավոր պատմաբանը, սակայն, ավելի հեռուն գնաց, ավելի լայն հայեցակետով դրեց հարցը՝ ինքնուրույն հայկական թագավորության վերականգնման խնդիրը մեկնաբանելով ոչ միայն V դարի, այլև հաջորդ հարյուրամյակների հայ ազատագրական կռիվ-

---

ռեալ էր աշխարհականաց քրիստոնէից») պաշտոնը հայերից խլելուն և պարսիկներին հանձնելուն, մոգպետին «դատաւոր աշխարհին» կարգելուն և այլն, որոնք մեծապես բորբոքեցին ժողովրդի ապստամբական տրամադրությունները։

31 Նույն տեղում, էջ 20—21։

32 Տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 97—99։

ների ընդհանուր ասպեկտով՝ աղերսելով այն հին Հայաստանի նախարարական կառուցվածքի առավել կարևոր առանձնահատկություններին[33]։ «Հիմք կա կարծելու,— նշել է նա,— թե Արշակունյաց ժառանգության համար իրենց պատյաններից պատրաստվում էին սուր հանել ոչ միայն Սյունյաց, այլև Մամիկոնյան, Արծրունյաց և Բագրատունյաց տների նախարարները»։ Շարունակելով իր միտքը, Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «Վերջերս հրապարակվեց Վ. Նալբանդյանի մի հոդվածը (հեղինակը նկատի ունի մեր՝ «451 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը» հոդվածը—Վ. Ն.), որը դիտել է տալիս, թե Հայաստանի պատմությունը քաղաքական այս առանցքի շուրջն էր դառնում արդեն իսկ V դարի կեսերին, այսպես կոչված Վարդանանց պատերազմի նախօրեին և այդ պատերազմի ժամանակ»[34]։ Միանգամայն հիմնավոր է թվում Աշոտ Հովհաննիսյանի այն եզրահանգումը, թե՝ «Արշակունի թագավորների ժառանգներ լինելու հավակնություն ունեցող հայ նախարարները հաջորդ դարերում պայքարում էին Հայաստանի ազատագրման համար Արշակունյաց թագավորությունը վերականգնելու նշանաբանի տակ»[35]։

Կասկած չի հարուցում այն, որ ապստամբության ուխտին անվերապահ հարած նախարարների կողմից «տեղապահ թագաւորութեան» ընտրված Վարդան Մամիկոնյանի՝ հայոց թագավորությունը վերականգնելու ազգանվեր ջանքերը ջերմ աջակցություն պիտի գտնեին ոչ միայն երկրի ավագանու, եկեղեցու և գորքի կողմից, այլև օտարի գերիշխանության տակ ընկած, նրա քաղաքական, սոցիալ-տնտեսական լուծը կրող, անագորույն կրոնական հալածանքներին ենթակա ժողովրդի ամենալայն զանգվածների շրջանում։

Մեր հարցադրումից, ի դեպ, որոշ բան պարզվում է նաև Մամիկոնյանների և մյուս հայ ազդեցիկ նախարարական տների բարդ փոխհարաբերությունների մասին։ Այստեղ մեզ հետաքրքրողը, մասնավորապես, Վարդան—Վասակ փոխհարաբերությունն է և ապստամբության վճռական պահին Սյունյաց իշխանի քաղաքական դիրքի հիմնական սոցիալ-հոգեբանական դրդապատճառի հարցը[36]։ Անհերքելի փաստ է, որ ազատագրական ապստամբության վճռական պահին, երբ հաջողության հասնելու համար այնքա՜ն անհրաժեշտ էր ուժերի միասնությունը, Վասակը լքեց ապստամբներին, ջլատեց ուժերն ու անցավ պարսիկների կողմը՝ իր հետ տանելով մի քանի նախարարներ։ Փառասեր ու իշխանատենչ Վասակը, որ երկրի մարզպանն էր, պարսիկների կողմից կարգված ամենաբարձր պաշտոնյան և, ըստ երևույթին, ավելի շատ հավակնություն կարող էր ունենալ հայոց թագավոր դառնալու, գրգռվելով նախարարների վերաբերմունքից (Վարդանին նախընտրելու), դավաճանության ուղին բռնեց՝ հույս ունենալով այդ գնով հայոց թագն ստանալ Հազկերտ II-ի

---

33 Տե՛ս նույն տեղում, էջ 99 և հտ.։

34 Նույն տեղում, էջ 97։

35 Նույն տեղում, էջ 99։ Նկատենք, ի դեպ, որ V դարի ապստամբության անցքերը քննելիս դրանք նույն մտքին է հանգել բազմավաստակ հայագետ Լեոն։ Տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 51։

36 Իրականում, իհարկե, շատ բարդ ու հակասական է եղել Վասակ Սյունու և՛ մարդկային նկարագիրը, և՛ նրա քաղաքական վարքագիծը ու մենք բնավ մտադիր չենք արհեստական կերպով դուրացնելու հարցը։ Սյունյաց իշխանի քաղաքական վարքագծի մասին բավական գրվել ու խոսվել է և այժմ էլ, մեր օրերում ժամանակ առ ժամանակ մամուլի էջերում այն բանավեճի առիթ է դառնում՝ երբեմն ասպարեզ հանելով դյուրագայթ ու թեթևաքաշ հարցադրումներ, որոնց նպատակը հիմնականում Վարդանանց պատերազմի ժամանակ Վասակի վարած քաղաքականությունը դիվանագիտական առումով ավելի շրջահայաց և զգուշավոր ներկայացնելու բացահայտ միտումն է։ Այստեղ մենք նպատակ չունենք մանրամասն անդրադառնալ այդ հարցին և տալ Վասակի վարած քաղաքականության բնութագիրը, այլ մենք արել ենք մեր «Վարդանանց պատերազմը և Գ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը» մենագրության մեջ։ Այժմ էլ պաշտպանում ենք մեր կարծիքը, թեև կարելի էր անել որոշ խմբագրական շտկումներ ու հավելումներ։

ձեռքից (կամ, ամենաքիչը՝ պահպանել մարզպանական պաշտոնը)։ Այս առթիվ արդեն առատ տեղեկություններ են հաղորդում Եղիշեն և Փարպեցին։ Հիշենք թեկուզ Վասակի անփառունակ վախճանի նկարագրությունը Եղիշեի մատյանից, որ պատմիչը ավարտում է հետևյալ հատվածով. «Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։ Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»[37]։

Սույն հոդվածում բանավեճի առարկա խնդրի առթիվ բնականաբար մի հարց է ծագում. ինչո՞ւ մեր V դարի պատմիչները՝ Եղիշեն ու Փարպեցին ուղղակի վկայություններ չեն թողել Վարդան Մամիկոնյանի միջոցով հայոց գահը վերականգնելու առթիվ։ Ժամանակին մենք այդ հարցը երկու կերպ են բացատրել[38]։ Նախ՝ մեր հին պատմիչները որոշակի մի ձգտում են ունեցել՝ Վարդանանց ապստամբությունը ներկայացնել որպես սոսկ քրիստոնեական կրոնի համար մղվող պատերազմ, իսկ իրեն՝ Վարդանին և իր զինակիցներին՝ իբրև հավատի համար նահատակված վկաներ և այս պատճառով էլ, հավանաբար, Վարդանի կրոնական փառքին չեն ուզեցել որևէ «աշխարհիկ կենաց» տարր խառնել։ Այն դարում մեր պատմիչների այսօրինակ միտումն ու մտայնությունը միանգամայն բնական պիտի համարել։ Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, երբ մեր հին պատմիչները (իհարկե, ոչ միայն Եղիշեն ու Փարպեցին) պատմության հայտնի դեպքերը ձգտել են մեկնաբանել լոկ քրիստոնեական կրոնի ու հայ եկեղեցու շահերի դիտակետից, հանգամանք, որ, ինչպես հայտնի է, շատ դեպքերում հանգեցրել է պատմական եղելությունների միակողմանի մեկնաբանության[39]։ Հնարավոր ենք համարել նաև մեկ այլ ենթադրություն. որ մեր հին պատմիչների՝ Եղիշեի ու Փարպեցու երկերում իրոք արձանագրված լինի փաստը, որ հետո դուրս է գցվել գրիչ-խմբագիրների ձեռքով։ Ժամանակին մեր ա՛յս ենթադրություններն էլ ընդունվել են Աշոտ Հովհաննիսյանի կողմից։ «Այս ամենից դժվար չէ հանգել այն եզրակացության,— գրել է հետազոտողը,— թե Վարդանանց պատերազմի ժամանակ Մամիկոնյան և Սյունյաց նախարարական տների բախումը տեղի ուներ մասամբ հենց Արշակունյաց քաղաքական ժառանգության շուրջը, հանգամանք, որ մեզ հասած հնագույն պատմական աղբյուրների մեջ դիտավորյալ մթարկվել է կամ դուրս է ձգվել հետագա գրիչների ձեռքով՝ նպատակ ունենալով վեր հանել սոսկ անցքերի կրոնա-բարոյական կողմը կամ ներկայացնել Վարդանին և յուրայիններին միայն որպես կրոնի և եկեղեցու համար նահատակված վկաներ»[40]։

Ավարտելով մեր խոսքը, կցանկանայինք ասել, որ բանավեճի առարկա խնդիրը, թերևս լրացուցիչ ուսումնասիրությունների և հիմնավորման կարիք ունի, և գուցե դրանով առաջիկայում զբաղվեն պատմաբանները, բայց բոլոր դեպքերում հազիվ թե խոհեմ բան նկատվի մեր առաջադրած տեսակետը այդպես դյուրությամբ, առանց ապացույցներ բերելու «մերժելի» հայտարարելն ու դրանով հարցը փակելը։

---

37 Եղիշե, էջ 140։

38 Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 12, էջ 72—73։

39 Արդյո՞ք այդ նույն մտայնությամբ չեն առաջնորդվել Մխիթարյան միաբանության հայրերը՝ Մեսրոպ Վայոցձորցու «Պատմությունը» հրատարակելիս նրա հիշատակարանից դուրս թողնելով Վարդան Մամիկոնյանի՝ Արշակունիների ոստանին տիրակալություն ունենալու փաստը, որը, ինչպես տեսանք, սերտորեն առնչվում է հայոց թագավորական իշխանության վերականգնման հարցի հետ։

40 Աշոտ Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 99։

ВОПРОС ВОССТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОГО ЦАРСТВА В ПЕРИОД ВОЙНЫ ВАРДАНИДОВ

Член-корр. АН АрмССР В. С. НАЛБАНДЯН

Резюме

Критическое рассмотрение армянских исторических первоисточников (Товма Арцруни, Месроп Вайоцдзорци, Вардан Вардапет) подтверждает, что в ходе подготовки и в период восстания армян против персидского владычества был поставлен вопрос о восстановлении армянской государственности—самостоятельного Армянского царства, вместо упраздненной в 428 г. династии Аршакидов. На армянский трон нахарары (князья) выдвинули кандидатуру руководителя освободительной войны, спарапета (военачальника армянских войск), видного государственного деятеля Вардана Мамиконяна.